

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել սույն նյութը ստերիլում համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԿ

ԿԱԴՐԵՐԻ ՍԵԿՏՈՐ
ՀԵՐԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԲԱԶԱ

ԺՏԳԽ

-66-

Վ. Ա. ՀԱՐՈՆՅԱՆ

Մ Ա Թ Ե Մ Ա Տ Ի Կ Ա

III ԿՈՆՑԵՆՏՐ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1—2



Մ Ե Ր Ո Ւ Ս Ա Ն Ո Ղ Ն Ե Ր Ի Ն

ՔՆԿԵՐՆԵՐ,

Նախքան աշխատանքներին անցնելը, աճերածես լիվ ող-
տակար ե ամենից առաջ վերջնականապես պարզել ու վորոշել,
քե ի՞նչ բանի վրա յե՞նք մե՞նք սուխասելու, վա՞ր՞ն ե մեր աշխա-
տանքի բնույթը և ինչպես պիտի աշխատենք:

Բավական ե միայն ուշադիր կերպով նայեք ձեր շուրջը,
անմիջապես կհամոզվեք, վոր ամեն ինչ վոր հանդիպում ե ձեզ՝
կամ պիտի հաշվեք, կամ պիտի չափեք, վորի համար անհրաժեշտ
ե գտնել շատ ավելի նպատակահարմար, ձեռնտու և հարմար ձե-
վեր:

Դուրս եք գալիս սնից և գնում աշխատանքի դեպի ֆար-
բիկա կամ գործարան: Ճանապարհին—նախ՝ դուք կարող եք
հաշվել պատահած տների քանակը, լերկորոզ՝ չափել այն տարա-
ծությունը, այն ուղին, վորով անցել եք, լերբորոզ՝ ժամացույցով
իմանալ, թե վորքան ժամանակ եք գործադրել ավյալ ուղին՝ անց-
նելու համար և չորբորոզ՝ հաշվել թե մի վարկչանում քանի՞ մետր
տարածություն եք անցել:

Այստեղ դուք դեռևս գործ ունեք հասարակ, խորրյա մաթե-
մատիկայի հետ և մենք լենթադրում ենք, վոր սովորական այս
ձևի հաշվառումներով և չափումներով կարող եք զլուս հանել:

Մենք լենթադրում ենք նաև, վոր դուք լավ գիտեք ամբողջ
և կտարակ թվերի բոլոր գործողությունները, կարողանում եք
վորոշել հասարակ մարմինների մակերևույթն ու ծավալը և ծա-
նոթ եք այդերբայի—հանրահաշվի ու լերկրաչափության տարրա-
կան գիտելիքներին:

Բայց հանկարծ գալիս եք ֆարբիկա: Այստեղ արդեն պա-
հանջվում ե մաթեմատիկայի ավելի բարձր գիտություն և ավելի
լրջություն: Չեզ առաջարկվում ե որինակ՝ մետաղալարից—մավ-
թուլից պատրաստել—վորբել ու շինել զսպանակ (պրուժինա)
50 սձ. բարձրությունը և 6 սմ. տրամագծով, և այնպես պետք ե

Պետերստի ս պարտ
Կավիտ 6751 ք)
Պատվեր 3918/6374
Տիրած 1000



լինի շինված, վոր նա ունենա իր մեջ 10 վիտոկներ (ВИТКОВ)՝ Այդ աշխատանքի համար վորքան սանտիմետր մալթուլ պիտի վերցնեք, Պետք է կատարել հաշիվներ—գործողություններ, իսկ դրա համար հարկավոր է իմանալ պտուտակի ձևը, շրջապատի—շրջագծի յերկարությունը, Պյութագորի թեորեման և այլն:

Ապա դուք հետաքրքրվում եք այս կամ այն մեքենայի ուժեղության—կորոպության հաշիվներին վերաբերող խնդիրներով: Պարզվում է, վոր այստեղ ևս, վորպեսզի ամեն ինչ կարողանաք հասկանալ և ըմբռնել, անհրաժեշտ է շիտենալ հավասարությունների վճռելը, զանազան մարմինների մակերևույթների և ծավալների վորոշումը, յեռանկյունաչափական ֆունկցիաները և այլն:

Ահա հենց այդ ավելի լուրջ մտքեմտաթիկայի խնդրով է, վոր մենք պիտի զբաղվենք այստեղ:

Մենք գտնում ենք վոր առանց մաթեմատիկայի կիրառական սկզբունքների ուսումնասիրության, առանց տիրանալու այն մեթոդներին, վորով կարողանում ենք վճռել զանազան խնդիրներ, վոչ մի տեսակի տեղեկատուներով (Справочник) գրուխ չեք կարող հանել, վոչ մի լուրջ աշխատանք և լուրջ հաշվառում չեք կարող կատարել: Տեխնիկ աշխատավորի համար անշուշտ հարկավոր է ունենալ տեղեկատու գրքույկ, քանի վոր ամեն տեսակի տեղեկություններ մտքում պահել շատ դժվար է, սակայն նա ոգտակար կարող է լինել միայն այն ժամանակ, յերբ տվյալ անհատն արդեն ուսումնասիրել է մաթեմատիկան:

Նրկա ձեռնարկը նպատակ ունի բացատրելու տարական մտքեմտաթիկայի վերաբերող ամենագլխավոր յեվ կապովոր գիտելիքները, օեղեկությունները, վորոնց ուսումնասիրությունը հնարավորություն կա ձեզ գործ ունենալ յեվ հասկանալ արագություն ամեն օեակի բնագավառներին վերաբերող լուրջ հաշվառումները, հասկանալ այս կամ օեյտեմեկ օգտություն վերաբերող օեակյան խնդիրները—դասողությունները:

Մաթեմատիկական այս կամ այն խնդիրը բացատրելուց և որի ակները վերլուծելուց հետո, վորոնք անհրաժեշտ են ավալակարգի լավ լուրացման համար, պետք է մատնանշվեն, թե ինչպես, տեխնիկայի ու արտադրության վճիռ շրջանակներում կարելի չէ այդ հարցը կիրառել:

Անշուշտ, հնարավորություն չունենք գրքույկի մեջ գեաեղելու բոլոր այն դեպքերը, վորտեղ մաթեմատիկական կարող է ոգտության գալ: Բոլոր դեպքերում մարդն ուսումնասիրելով մա-

թեմատիկան՝ ինքը հնարավորություն կունենա հաշիվ տեսնել յերեն անհրաժեշտ խնդիրներին հետ: Նրան կարող են հանդիպել նաև մաթեմատիկական այնպիսի հարցեր, ճյուղոր (որինակ՝ հարաբերական թվերով գործողություններ, ալգեբրական արտահայտությունների կաղծելը և այլն), վորոնց անմիջապես կյանքի մեջ—գործնականում կիրառելը դժվար է, սակայն հետագա գործնական աշխատանքների ժամանակ կարող են լինել անհրաժեշտ: Սկզբում անշուշտ, կարող են հանդիպել միայն գործնական հասարակ խնդիրներ, դուցե և քիչ քանակությամբ, սակայն քանի առաջ գնանք—խնդիրներն ավելի և ավելի կարող են բարդ և լուրջ ձևեր ընդունել, նման դեպքեր կարող են կրկնվել հաճախակի:

Այժմ գայմանավորվենք այն մտքով, թե ի՞նչպես մեր ձեռնարկի օվալներով պիտի ուսումնասիրենք մտքեմտաթիկան:

Ամենից առաջ անհրաժեշտ է դանդաղ—առանց շտապելու և ճիշտ կերպով կարգալ բացատրվող նյութը—մատերիալը, կենտրոնանալով և լավ հասկանալով լուրացման շտապության և լուրացման շտապ բառի իսկական իմաստը: Առաջ անցնել կարելի չէ միայն այն ժամանակ, յերբ նախորդը բոլորովին հասկացել ու պարզել եք ձեզ համար:

Ամեն ճյուղում կամ մասում պահանջվող բոլոր վարժություններն ու խնդիրները անպայման պիտի կատարեք, այդ առաջադրված խնդիրներից ամեն մեկը նպատակ ունի ոգնելու ընթերցողին, վոր նա լուրացնի, հասկանա այն հարցի եյությունն ու տեսությունը, վորի մասին խոսվում էր մի փոքր առաջ, վորի մասին բացատրություններ եր տրվում վերևում և վորին վերաբերում են նրանք:

Այդպիսի զգուշ ու լուրջ վերաբերմունքն անհրաժեշտ է մաթեմատիկական աշխատանքներ կատարելու ժամանակ նրա համար, վոր մաթեմատիկան միշտ ձգտում է բոլոր իր կանոնները և յեղբակացությունները ձևակերպել բառերով կամ սխեմայիկ նշաններով՝ այնչափ ճիշտ և վորոշ, վոր այդ կանոններից ու յեղբակացություններից վորևե մեկի վոչ ճիշտ կամ սխալ ըմբռնումը՝ կարող է իսկությունը բոլորովին աղավաղել և հասցնել մարդկանց կոպիտ սխալների՝ և այս նրա համար, վոր դու աշխատելու յես ինքդ քեզ, առանց ղեկավարի անմիջական մասնակցության, վորի լինելու դեպքում հնարավորություն կունենալիր թույլ ավածք սխալներն անմիջապես շտկելու, ուստի և հեռակա հոգսերը ղեկավարող մարմինների հետ գրավոր հարաբերություն-

11-361869

ներ պահելու ժամանակ միշտ վաճառելու կամ վաճառելու համար մեր կողմից թույլ տրված վարկերից կարող ե թույլ տրված թույլ տրված մեջ ձգել ձեր հետևյալ գումարները ղեկավարողներին և հետագայում կարող ե պատճառ դառնալ ղեկավարողներին և ղեկավարողներին:

Վարժույթների համար առաջադրված որինակներն ու խնդիրները կունենան իրենց ցուցմունքներն ու պատասխանները, վորոնք ծառայելու լին իրեն ղեկավարողներին և ղեկավարողներին:

Սման մի պրակից—առաջադրույթներից հետո, անմիջապես հետևելու լին ստուգողական հարցեր և առանց պատասխանների խնդիրներ, վորոնց դուք պետք պատասխանեք, վճարեք և ուղարկեք՝ վերստուգման լին ղեկավարողներին:

ԱՌՍԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

1) 2, 3, 4, 5, 6, 9, 10, յեվ 25-ի վրա բաժանվող բվերի նշանակությունները:

2, 4, 6, 8, 10, 12, 14, 16, 18, 20, 22... թվերը կոչվում են զույգ թվեր:

Փորձեցեք և իմացեք, թե այդ թվերը բաժանվում են 2-ի վրա առանց մնացորդի, թե վոչ:

Ձեր առարկան մեջ ձևակերպեցեք ու գրի առեք, թե վճար թվերն են կոչվում զույգ թվեր:

Տեսրեքում գրեցեք 20-ից մինչև 100 բոլոր զույգ թվերը, 150-ից մինչև 300 բոլոր զույգ թվերը:

1, 3, 5, 7, 9, 11, 13, 15, 17, 19, 21... կոչվում են կենս թվեր:

Փորձելով իմացեք, թե այդ թվերը 2-ի վրա բաժանվում են առանց մնացորդի:

Տեսրեքում բաժանով գրեցեք, թե վճար թվերն են կոչվում կենս թվեր:

Դրեցեք առարկան 21-ից մինչև 100 բոլոր կենս թվերը, 201-ից մինչև 400 բոլոր կենս թվերը:

7, 9, 12, 28, 17, 32, 48, 49, 56, 54, 59, 63, 72, 71, 82, 84, 89, 85, 96, 105, 106, 248, 564, 759, 837, 964 թվերից շտկեցեք բոլոր զույգ թվերը և գրի առեք միմյանց հետևից ձեր առարկանում:

Նույնպես շտկեցեք բոլոր կենս թվերը և գրեցեք իրար հետևից առարկանում՝ գրելով, վոր նրանք կենս են կամ զույգ:

3, 5, 7, 11, 13, 17, 19, 23, 29, 31, 37... թվերը բացի 1-ից և իրենցից ուրիշ թվերի վրա բաժանվում են, թե վոչ: Այդ թվերը կոչվում են պարզ թվեր:

Ձևակերպեցեք և գրի առեք, թե վճար թվերն են կոչվում պարզ թվեր:

Դրեցեք 41-ից մինչև 201 յեղած բոլոր պարզ թվերը, 251-ից մինչև 301 յեղած բոլոր պարզ թվերը:

4, 6, 8, 9, 10, 12, 14, 15, 18, 20, 21, 22, 24... թվերը բացի իրենցից և մեկից ուրիշ թվերի վրա ևս բաժանվում են, թե՛ վոչ: Այդ թվերը կոչվում են բարդ թվեր: Վեր թվերն են կոչվում բարդ թվեր, ձևակերպեցեք և գրեցեք տեսքերում:

Գրեցեք 4 ից մինչև 100, 100-ից մինչև 250 բոլոր բարդ թվերը:

2, 7, 8, 9, 11, 15, 17, 12, 102, 56, 72, 77, 79, 78, 41, 45, 43, 105, 103, 96, 71, 88, 89, 64, 67, 65, 98, 99, 100, 101 թվերից զտեցեք բարդ թվերն ու պարզ թվերը և գրեցեք առանձին:

Գրեցեք 10 հատ պարզ, առաջինը և բարդ թվեր:

4, 6, 8, 10, 12, 14, 16, 18, 20, 30, 40, 42, 46, 114, 230, 520, 678... Այս թվերը բաժանվում են 2-ի վրա առանց մնացորդի, թե՛ վոչ: Ի՞նչպիսի թվանշաններով են վերջանում այս թվերը: Ձևակերպեցեք և գրե՛ առեք: Վեր թվերն են բաժանվում 2-ի վրա առանց մնացորդի:

Գրեցեք 2-ից մինչև 100, 2-ի վրա բաժանվող բոլոր թվերը, 200-ից մինչև 300, 2-ի վրա բաժանվող բոլոր թվերը:

12, 18, 21, 27, 30, 36, 48, 102, 306, 414, 561, 7842... թվերը բաժանվում են 3-ի վրա առանց մնացորդի, թե՛ վոչ: Մտազանեցեք ուղղակի 3-ի վրա բաժանելով: Այդ թվերի թվանշանների գումարը 3-ի վրա բաժանվում է, թե՛ վոչ:

Յուզմունք.— 27-ի թվանշանների գումարը $= 2 + 7 = 9$, իսկ 9-ը 3-ի վրա բաժանվում է առանց մնացորդի: Նմանապես 561-ի թվանշանների գումարը $= 5 + 6 + 1 = 12$ է, վորը նույնպես բաժանվում է 3-ի վրա առանց մնացորդի: Ուրեմն, վեր թվերն են բաժանվում 3-ի վրա առանց մնացորդի, ձևակերպեցեք ու գրե՛ առեք տեսքերում:

Գրեցեք 300 ից մինչև 600 բոլոր այն թվերը, վորոնք բաժանվում են 3-ի վրա՝ առանց մնացորդի: 1500-ից մինչև 2400՝ 3-ի վրա բաժանվող թվերը:

12, 16, 20, 24, 28, 32, 36, 40, 100, 112, 124, 144, 360, 4944, 976980... թվերն ուղղակի 4-ի վրա բաժանելով լիմայեք, թե՛ բաժանվում են արդյոք այդ թվերը 4-ի վրա առանց մնացորդի: Այնուհետև ուղղակի բաժանման գործողություն կատարելով տեսեք, թե՛ այդ թվերի վերջին յերկու թվանշանները (միավորը և տասնավորը) չոկ չոկ կամ միասին բաժանվում են 4-ի վրա առանց մնացորդի, թե՛ վոչ:

Վեցերեք մի թիվ, վորի տասնավորն ու միավորը միասին կամ շոկ շոկ բաժանվեն 4-ի վրա՝ առանց մնացորդի, մի ուրիշ թիվ էլ վերցրեք, վորի վերին այգյերկու թվանշանները շոկ-շոկ կամ միասին չեն բաժանվում 4-ի վրա առանց մնացորդի: Յուրկու թվերն էլ բաժանեցեք 4-ի վրա, վորն է առանց մնացորդի բաժանվում 4-ի վրա:

Այս կատարած աշխատանքներից ձևակերպեցեք ու գրե՛ առեք, թե՛ վոչ թվերն են բաժանվում 4-ի վրա առանց մնացորդի:

Գրեցեք 200-ից մինչև 720 յեղած բոլոր այն թվերը, վորոնք բաժանվում են 4-ի վրա առանց մնացորդի: Գրեցեք 1000 ից մեծ 10 հատ թվեր, վորոնք բաժանվեն 4-ի վրա առանց մնացորդի:

10, 15, 20, 30, 100, 105, 275, 6000, 78940, 570965... բաժանվում են 5-ի վրա առանց մնացորդի:

Ի՞նչպիսի վերջավորություն ունեցող թվերն են բաժանվում 5-ի վրա առանց մնացորդի:

Գրեցեք 200-ից 300 և 1900—2000 յեղած բոլոր այն թվերը, վորոնք 5-ի վրա առանց մնացորդի չեն բաժանվում:

6-ի վրա բաժանվում են այն թվերը, վորոնք միաժամանակ բաժանվում են և 2-ի վրա և 3-ի վրա առանց մնացորդի:

Գրեցեք 12-ից մինչև 160 յեղած 6-ի վրա բաժանվող բոլոր թվերը, 1200-ից 1320 յեղած 6-ի վրա բաժանվող բոլոր թվերը:

Գրեցեք 5400-ից բարձր 5 թիվ, վորոնք բաժանվեն վեցի վրա առանց մնացորդի:

Գրեցեք 10 հատ այնպիսի թվեր, վորոնք վերջին յերեք թվանշանները միասին կամ թե՛ շոկ-շոկ բաժանվեն 8-ի վրա առանց մնացորդի, այնուհետև այդ թվերն ուղղակի բաժանեցեք 8-ի վրա, բաժանվում են արդյոք այդ թվերը 8-ի վրա առանց մնացորդի, թե՛ վոչ:

Ձևակերպեցեք բաճարով և գրե՛ առեք 8-ի վրա բաժանվող թվերի կանոնը:

5824-ից բարձր 5 հատ թիվ գրեցեք, վորոնք առանց մնացորդի բաժանվեն 8-ի վրա:

9-ի վրա բաժանվում են այն թվերը, վորոնք թվանշանների գումարը բաժանվում է առանց մնացորդի 9-ի վրա:

Գրեցեք 10 հատ թվեր, վորոնք բաժանվեն 9-ի վրա առանց մնացորդի:

10-ի վրա բաժանվում են զրոյով վերջացող բոլոր թվերը: 25-ի վրա բաժանվում են առանց մնացորդի բոլոր այն

Թվերը, վորոնք վերջանում են 25-ով, 50-ով, 75 ով կամ առնվազն՝ յերեք չորով:

2. Թվերի պարզ արտադրիչների վեածելը յեվ ընդհանուր ամե-
նափոք բազմապատիկ քվի գտնելը:

3. 4=12. սա, ինչպես տեսնում եք, բազմապատկման գոր-
ծողութունն է. 3-ը կոչվում է բազմապատկիչի, 4-ը՝ բազմապատ-
կիչ, 12-ն՝ արտադրյալ: Բայց սրա փոխարեն կարելի լի գրել
նաև 4. 3=12. այժմ արդեն 4-ն է բազմապատկիչին, իսկ յերեքը՝
բազմապատկիչ: Ուրեմն յեթե ուզենանք բազմապատկելին դարձ-
նել բազմապատկիչ և բազմապատկիչը՝ բազմապատկելի, արտա-
դրյալը չի փոխվի: Նշանակում ենք այժմ չենք լինի, յեթե ա-
սենք՝ 3-ը և 4-ը 12-ի բազմապատկիչներն են: Հաճախ բազմա-
պատկիչ բառի փոխարեն գործ են անում արտադրիչ բառը, քանի
վոր այդ թվերն արտադրում են 12 թիվը: Ասում ենք նաև այս-
պես՝ 3 և 4-ը 12-ի արտադրիչներն են: Բայց կարելի յի ասել
նաև, վոր 3-ը և 4-ը 12 ի բաժանարարներն են, քանի վոր 12-ն
առանց մնացորդի բաժանվում է 3- և 4-ի վրա: Այսպիսով՝ այն
թվերը, վորոնց վրա տվյալ թիվը բաժանվում է առանց մնացորդի,
կոչվում են այդ թվի բազմապատկիչները, արտադրիչները կամ
բաժանարարները, իսկ այդ բաժանվող թիվը կոչվում է բազմա-
պատիկ. այսպես՝ 12-ը 3-ի և 4-ի բազմապատկիչն է. Բայց 3-ի և
4-ի համար բազմապատիկ թվեր շատ կան. որինակ՝ 24-ը, 36-ը
48-ը, 84-ը... նույնպես 3-ի և 4-ի բազմապատկիչներն են: Այնպես,
վոր տվյալ թվերի համար կտրելի յի գտնել առթիվ քանակով
բազմապատիկ թվեր, վորոնց մեջ, սեկան մեկը կլինի դրանցից
ամենափոքրը. որինակ՝ տվյալ դեպքում 3-ի և 4-ի ամենափոքր
բազմապատիկ թիվը 12-ն է. այդ թվից փոքր թիվ չկա, վոր բա-
ժանվի և 3-ի, և 4 ի վրա առանց մնացորդի:

Թվաբանութան և հանրահաշիվի մեջ, կոտորակների դումար-
ման և հանման ժամանակ, թվերի ամենափոքր բազմապատիկը
շատ անհրաժեշտ է լինում, ուստի պետք է իմանանք, թե ինչ-
պես են գտնում այդ թիվը:

Ընդհանուր ամենափոքր բազմապատիկ թիվը գտնում ենք
այսպես.

ա) Գտնել 12 ի և 18-ի ընդհանուր ամենափոքր բազմա-
պատիկ թիվը: Այդ թվերը նախ պարզ բազմապատկիչներն յենք
վերածում, այսինքն՝ գտնում ենք այն բոլոր պարզ թվերը, վոր-
ոնց վրա 12-ը բաժանվում է առանց մնացորդի և այն բոլոր
պարզ թվերը, վորոնց վրա 18-ը բաժանվում է առանց մնացորդի:

Պարզ բաժանարարների վերածելու գործողութունը կատարվում
է այսպես.

12 2	Ուրեմն՝ 12=1.2.2.3,	18 2	18=1.2.3.3
6 2		9 3	
3 3		3 3	
1 1		1 1	

Արտադրում ենք մեծ թվի բոլոր պարզ բաժանարարները,
այա համեմատում ենք մյուս թվի բաժանարարների հետ և այդ
մեծ թվի բաժանարարների վրա, իբրև բազմապատկիչներ, ավե-
լացնում ենք փոքր թվից այն բազմապատկիչները, վորոնք բա-
ցակայում են մեծ թվի մեջ: Տվյալ դեպքում՝

Ընդ. ամենափ. բազմ.=1.2.3.3.2=36,

Այստեղ 1.2.3.3-ը 18-ի բազմապատկիչներն են, իսկ վեր-
ջին ընդգծված 2-ն ավելացրել ենք 12-ի բազմապատկիչներից,
վորովհետև 18-ի բազմապատկիչների մեջ միայն մեկ հատ 2 կա.

Բայց 12-ի և 18-ի ընդ. ամենափոքր բազմապատիկը կա-
րելի յի գտնել տվելի կարճ ճանապարհով. այսպես՝

12, 18 2			
6 9 2	ընդ. ամփ. բազմ.=1.2.2.3.3=36		
3 9 3			
1 3 3			
1 1 1			

այսինքն՝ տված թվերը միասին վեր ենք անում պարզ բաժա-
նարարների և ստացված բաժանարարները բազմապատկելով զըտ-
նում ենք ընդ. ամենափոքր բազմապատիկը:

ԾԱՆՈԹ. Միասին պարզ բաժանարարների վերածելու, նախ ամե-
նափոքր պարզ թվի վրա յենք բաժանում տված թվերը, վորի վրա
նրանցից կամ յերկուսն էլ բաժանվում են և կամ թե գոնե մեկն ու մեկն
է բաժանվում. այդ դեպքում չբաժանվող թիվը նույնութամբ իջեցնում
ենք նրա ասիլը, մինչև վոր նա ևս բաժանվում է: Գործողութունը շա-
րունակում ենք տյնքան մինչև վոր տված բոլոր թվերն էլ վեր են ան-
վում պարզ բաժանարարների:

Վերցնենք մի ուրիշ որինակ՝ գտնել 120-ի, 280-ի և 420-ի
ընդհ. ամենափոքր բազմապատիկ թիվը:

ա) 120 2	280 2	420 2
60 2	140 2	210 2
30 2	70 2	105 3
15 3	35 5	35 5
5 5	7 7	7 7
1 1	1 1	1 1

Ընդհ. ամենափ. բազմապատիկը=1.2.2.2.3.5.7=840. կամ

բ)	120,	280,	420	2	ընդ. ամենափոքր
	60	140	210	2	բազմապատիկը=
	30	70	105	2	=1.2.2.2.3.5.7=840
	15	35	105	3	
	5	35	35	5	
	1	7	7	7	
	1	1	1	1	

Ահա այսպես են գտնում փոխադարձ բարձր*) թվերի ընդհ. ամենափոքր բազմապատիկը:

Մրանցից առաջին ձևը գործ է ածվում հատկապես հանրահաշվական արտահայտությունների ընդհանուր ամենափոքր բազմապատիկ թիվը գտնելիս, իսկ յերկրորդ ձևով՝ թվերի ընդհանուր ամենափոքր բազմապատիկ թիվը ենք գտնում:

Յերկրորդ՝ կարճ ձևով գտեք հետևյալ թվերի ընդհանուր ամենափոքր բազմապատիկը:

- | | |
|-------------------|---------------------------------|
| 1) 36-ի և 48-ի: | 4) 18-ի, 12-ի և 10-ի: |
| 2) 64-ի և 96-ի: | 5) 200-ի, 140-ի և 350-ի: |
| 3) 560-ի և 800-ի: | 6) 72-ի, 360-ի, 450-ի և 2400-ի: |

բ) Գտնել 8-ի և 24-ի ընդհանուր ամենափոքր բազմապատիկ թիվը: 8-ի և 24-ի ընդհ. ամենափոքր բազմապատիկը=24 ի, վերոզհետև 24-ը բաժանվում է առանց մնացորդի թե 8-ի վրա և թե 24 ի վրա: Նմանապես 6 ի, 12 ի և 36-ի ընդհանուր ամենափոքր բազմապատիկը=36-ի:

Գտնել 1) 40-ի և 120, 2) 720-ի և 240-ի, 3) 735 ի, 105-ի և 15-ի, 4) 75-ի, 50-ի, 30-ի և 150 ի ընդհանուր ամենափոքր բազմապատիկ թիվը:

գ) Գտնել 8-ի և 9-ի ընդհանուր ամենափոքր բազմապատիկը. 8-ի և 9-ի ընդհ. ամենափ. բազմ.=8.9=72:

Այսինքն՝ չկրթ աված թվերը փոխադարձ պարզ***) թվեր են լինում, ընդհ. ամենափոքր բազմապատիկը գտնելու համար ուղ-

*) Փոխադարձ բարձր թվեր կոչվում են այն թվերը. վորոնք ունեն ընդհանուր բաժանարարներ, որինակ՝ 12-ը և 18-ը փոխադարձ բարձր թվեր են, վորովհետև յերկուսն էլ բաժանվում են և 2-ի և 3-ի վրա:

**) Փոխադարձ պարզ կոչվում են այն թվերը, վորոնք ընդհանուր բաժանարարներ չունեն, որ՝ 8 և 9-ը, 20 և 11-ը, 9 և 16-ը, 13 և 15-ը:

ղակի այդ թվերը բազմապատկում ենք, ստացված արտադրյալը լինում է ընդհ. ամենափոքր բազմապատիկը:

Գրեցեք հետևյալ թվերի ընդհանուր ամենափոքր բազմապատիկը:

- | | |
|-----------|----------------|
| 1) 12 և 5 | 4) 8, 15 և 7, |
| 2) 9 և 7 | 5) 3, 4 և 5, |
| 3) 15 և 4 | 6) 11, 12 և 7: |

Հասարակ կոտորակների գումարումը յեվ հանումը:

1. Որիճակ. — գումարել $\frac{3}{8}$ և $\frac{2}{8}$ կոտորակները.

$$\text{Լուծում.} \quad \frac{3}{8} + \frac{2}{8} = \frac{5}{8}$$

2. Որիճակ. — $\frac{5}{8}$ կոտորակը հանել $\frac{7}{8}$ կոտորակից.

$$\text{Լուծում.} \quad \frac{7}{8} - \frac{5}{8} = \frac{2}{8} = \frac{1}{4}$$

Ի՞նչ ենք արել գումարման և հանման ժամանակ կոտորակների համարիչները: Ձևակերպեցեք և զրի առիք ձեր տեսերերում միատեսակ հայտարարներ ունեցող կոտորակների գումարման և հանման գործողությունների կանոնը:

3. Որիճակ. — Գումարել $\frac{1}{2}$ և $\frac{3}{8}$ կոտորակները:

Լուծում. — Նախ այդ կոտորակների մասերի մեծությունը պիտի հավասարեցնել, այսինքն՝ առանց փոխելու կոտորակների մեծությունը պիտի նրանց հայտարարները հավասարեցնել: Յերկու կոտորակի հայտարարների ընդհանուր ամենափոքր բազմապատիկ թիվը պիտի գտնել. հենց 8-ը կլինի ընդհ. ամենափ. բազմ. թիվը: Ուրեմն՝ առաջին կոտորակի հայտարարն էլ պիտի 8 գրենք, բայց զրանով հայտարարը 4 անգամ կմեծանա և կոտորակի մեծությունը կփոխվի, ուստի համարիչն էլ պիտի նույնքան անգամ մեծացնենք, վոր կոտորակի մեծությունը չփոխվի: Կգրենք. —

$$\frac{1}{2} + \frac{3}{8} = \frac{4}{8} + \frac{3}{8} = \frac{7}{8}$$

$$\text{Նմանապես} \quad 2\frac{3}{5} + \frac{7}{10} = 2\frac{6+7}{10} = 2\frac{13}{10} = 3\frac{3}{10}$$

$$3\frac{5}{6} + 8\frac{13}{18} = 11\frac{15+13}{18} = 11\frac{28}{18} = 12\frac{2}{18} = 12\frac{5}{9}$$

4. արժեք. — ա) $\frac{1}{2} - \frac{3}{8} = \frac{4-3}{8} = \frac{1}{8}$
 բ) $3\frac{7}{9} - \frac{13}{18} = 3\frac{14-13}{18} = 3\frac{1}{18}$
 գ) $4\frac{1}{3} - 2\frac{5}{6} = 2\frac{2-5}{6} = 1\frac{3}{6} = 1\frac{1}{2}$
 դ) $5 - 3\frac{3}{7} = 4\frac{7}{7} - 3\frac{3}{7} = 1\frac{7-3}{7} = 1\frac{4}{7}$

Ուշադրութիւն դարձնելով այս որինակներէ մեջ կատարած գործողութիւններէ վրա, իմացե՛ք. ա) ինչպես ենք վարվում հանման ժամանակ, լերբ նվազելի կոտորակի համարիչը փոքր ե հանելի կոտորակի համարիչից, բ) յերբ նվազելին կոտորակային մասեր չունի:

Լուծեցե՛ք հետևյալ որինակները. —

1) $\frac{5}{8} + \frac{3}{4} =$ 6) $\frac{a}{b} + \frac{5d}{ab} =$
 2) $\frac{4}{9} + \frac{11}{18} =$ 7) $\frac{3a^2b}{10c^3d} + \frac{7ab^3}{20c^6d^2} - \frac{8ab}{5c^3} =$
 3) $\frac{3}{5} + \frac{7}{10} - \frac{11}{30} =$ 8) $\frac{3a+2b}{a} + \frac{2a^2-2b^2}{ab} - \frac{2a+3b}{b} =$
 4) $5\frac{7}{20} + 2\frac{13}{100} - 4\frac{8}{20} =$ 9) $\frac{1}{m+n} + \frac{2n}{m^2-n^2} =$
 5) $15 - \frac{8}{15} - 6\frac{17}{30} =$ 10) $\frac{a+3}{a-3} + \frac{a-3}{a+3} - \frac{a^2+9}{a^2-9} =$

Վերջին հինգ որինակը, ինչպես տեսնում ենք, հանրահաշվական կոտորակներ են: Նրանց մեջ ել գումարման և հանման գործողութիւնները կատարում եք ձիշտ այնպես, ինչպես թվաբանական կոտորակների մեջ միայն թե՛ յերբ կոտորակի համարիչը բազմանդամանի յե լինում և կոտորակից առաջ հանման գործողութիւնն նշան ե լինում զրված, այդ նշանը համարիչ փոխադրելիս՝ պետք ե բազմանդամանի անդամների նշանները փոխել այսպես.

$\frac{3}{2x-1} - \frac{2}{3x-4} + \frac{1}{6x+6} =$ ա) $2x+2 = 2(x+1)$
 $\frac{3(2x-1) - 2(3x-4) + (x-1)}{6(x+1)} =$ բ) $3x+3 = 3(x+1)$
 $\frac{6x-3-6x+8+x-1}{6(x+1)} = \frac{x+4}{6(x+1)}$ գ) $6x+6 = 6(x+1)$
 Ընդ. հայտ. = $6(x+1)$

Ուշադրութիւն դարձնելով այս որինակի լուծման վրա, տեսնում եք, վոր ա) վորպեսզի գտնեյինք ընդհանուր հայտարարը,

քոլոր կոտորակներէ հայտարարները շուկ-շուկ վեր ենք ածել պարզ բազմապատկիչների, վորից հետո միայն նկատել ենք, վոր վերջին կոտորակի հայտարարը բոլորի հայտարարների համար ել ընդհ. ամենափ. բազմ. թիվ ե:

բ) Ընդհ. ամենափ. բազմ. թիվը գրել ենք ընդհանուր հայտարար և բաժանելով մյուս կոտորակների հայտարարների վրա, (հեշտութեամբ բաժանելու համար պարզ բազմապատկիչների վերածած հայտարարների վրա յենք բաժանել), ստացված քանորդը գրել ենք ամեն մի կոտորակի համարիչի վերևում, վարպես համարիչի լրացուցիչ բազմապատկիչ. այդ բազմապատկիչն անպայման պիտի գրել, վորպեսզի հետագայում բարդ գործողութիւններ կատարելիս չսխալվեք: գ) Փակագծերը բացելիս և համապատասխան բազմապատկման գործողութիւնները կատարելիս, լերբ փակագծից դուրս յեղած նշանը մինուս (—) ե յեղել, փակագծի միջի անդամների նշանները փոխել ենք ու հետո կատարել նման անդամների միացում, իսկ միացման ժամանակ նման նշաններ ունեցող անդամների գործակիցները գումարում ենք և զնում ընդհանուր նշանը, տարբեր նշաններ ունեցող անդամներից մեծի գործակիցից հանում ենք փոքրի գործակիցը ու զնում մեծի նշանը:

Ծ.բ գ օրինակ. — Գումարել $\frac{2}{3}$ և $\frac{3}{4}$ կոտորակները:

Լուծում. — Հայտարարները փոխադարձ պարզ թվեր են, ուստի նրանց ընդհ. ամենափ. բազմապատկիչը գտնելու համար պիտի ուղղակի բազմապատկել այդ թվերը, կլինի՝ $3 \cdot 4 = 12$, ուստի

$\frac{2}{3} + \frac{3}{4} = \frac{8+9}{12} = \frac{17}{12} = 1\frac{5}{12}$

Նմանապես $1\frac{5}{7} + \frac{2}{3} = 1\frac{15+14}{21} = 1\frac{29}{21} = 2\frac{8}{21}$

$2\frac{4}{5} - 2\frac{3}{4} = \frac{16-15}{20} = \frac{1}{20}$

$6\frac{1}{7} - 3\frac{3}{4} + 1\frac{2}{3} = 4\frac{12-63+56}{84} = 3\frac{89}{84} = 4\frac{5}{84}$

Վերջին որինակում նախ հանման և գումարման գործողութիւնները կատարել ենք ամբողջների նկատմամբ, այսպես՝ $6 - 3 + 1 = 4$, այնուհետև կատարել ենք կոտորակային գործողութիւնները:

Ընդհանուր հայտարարի բերելուց հետո տեսնում ենք 12-ից 63 չի հանվում, ուստի 4 ամբողջից մեկ ամբողջը դարձրել ենք

կտորակ, վարը մեր 12 ի հետ միասին լեղել է 96, ապա 96-ից հանել ենք 63-ը և հետո գումարելով 56-ը ստացել ենք $3\frac{89}{84}$:

Կատարել հետևյալ վարժութիւնները.

1) $\frac{3}{5} + \frac{4}{7} =$

2) $1\frac{8}{9} + 3\frac{1}{2} =$

3) $4\frac{5}{6} - 2\frac{3}{5} =$

4) $15\frac{1}{2} - 8\frac{2}{3} + 3\frac{2}{5} =$

5) $8 - 5\frac{5}{8} - 1\frac{7}{9} + 6 =$

6) $\frac{1}{a} + \frac{1}{b} =$

7) $\frac{a}{x} - \frac{b}{y} =$

8) $\frac{2}{x+1} + \frac{3}{x} =$

9) $\frac{5}{2x-2} - \frac{7}{3x-3} =$

10) $\frac{2x-5}{x-4} + \frac{1-2x}{x-2} =$

11) $\frac{z-1}{z^2+1} - \frac{z-2}{z^2-1} =$

6-րդ սրիճակ. $-\frac{7}{12} + \frac{11}{18}$

Լուծում. — Այս կտորակների կտրատարները փոխադարձ բաժի թվեր են, ուստի նրանց ընդհ. ամենափ բազմապատիկը գտնելու համար կվերածենք պարզ արտադրիչներին, այսպես՝

122	182	ընդհ. ամեն. բազմ. = 2.3.3.2 = 36
62	93	
33	33	
1	1	

Կամ գտնում ենք այսպես՝ 12, 18՝

6	92	2.2.3.3 = 36
3	93	
1	33	
1	1	

Այսպիսով $\frac{3}{12} + \frac{11}{18} = \frac{21+22}{36} = \frac{43}{36} = 1\frac{7}{36}$

Նմանապես

$$\frac{\frac{c}{a+b} + \frac{a}{b+c} - \frac{b}{c+a}}{\frac{abc}{ac+bc+ab+ac-bc-ab}} = \frac{c(a+b) + a(b+c) - b(c+a)}{abc} = \frac{2ac}{abc} = \frac{2}{b}$$

$$\frac{12(x-1)}{(x+1)^2} + \frac{3(x+1)^2}{4(x-1)} - \frac{2(x+1)}{6(x^2-1)} =$$

$$= \frac{12(x-1)^2 + 9(x+1)^2 - 2(x+1)^2}{12(x+1)^2(x-1)} =$$

$$= \frac{12x^2 - 24x + 12 + 9x^2 + 18x + 9 - 2x^2 - 4x - 2}{12(x+1)^2(x-1)} =$$

$$= \frac{19x^2 - 10x + 19}{12(x+1)^2(x-1)}$$

ընդհ. հարա. գտնելը
 ա) $(x+1)^2 = (x+1)(x+1)$
 բ) $4(x-1) = 2 \cdot 2(x-1)$
 գ) $6(x^2-1) = 2 \cdot 3(x-1)(x+1)$
 ընդհ. հարա. = $2 \cdot 3(x-1)(x+1) \cdot 2 = 12(x+1)^2(x-1)$

Լուծել հետևյալ սրիճակները.

- 1) $7\frac{1}{2} + 9\frac{5}{8} - 3\frac{7}{12} =$
- 2) $\frac{11}{20} + 1\frac{4}{15} + 4\frac{11}{12} =$
- 3) $13\frac{7}{30} - 10\frac{17}{20} + 4\frac{19}{45} =$
- 4) $18\frac{3}{8} + 5\frac{7}{12} - 9\frac{13}{18} =$

- 5) $\frac{2ab}{3xy} - \frac{3ab}{4xy} + \frac{5ab}{6xy} =$
- 6) $\frac{3m+n}{15m^2n} - \frac{5n-m}{25mn^2} =$
- 7) $\frac{1}{15x-15} + \frac{1}{10x+10} =$
- 8) $\frac{z-1}{z^2+z} - \frac{z-2}{z^2-1} =$

Հասարակ կտրտակների բազմապատկումը.

1) գեղ. կտորակն ամբողջի վրա բազմապատկելը.

$$\frac{5}{6} \cdot 4 = \frac{5 \cdot 4^2}{6 \cdot 3} = \frac{10}{3} = 3\frac{1}{3} \text{ նմանապես}$$

$$3\frac{3}{5} \cdot 10 = \frac{18}{5} \cdot 10 = \frac{18 \cdot 10^2}{5} = 36$$

Ինչու լինեք կտորակն ամբողջի վրա բազմապատկելիս համարիչը բազմապատկում ամբողջով, գրում համարիչ, իսկ հարտաբարը թողնում նույնը:

Ինչ է նշանակում մի վորեն թիվ ամբողջ թվի վրա բազմապատկելը

Ինչպես ենք վարվում խառը թիվն ամբողջ թվի վրա բազմապատկելիս. ձևակերպեցեք և գրի առեք ձեր տեսությունը:

Կատարեցեք հետևյալ վարժութիւնները.

- 1) $\frac{5}{9} \cdot 6 =$
- 2) $\frac{4}{15} \cdot 20 =$
- 3) $\frac{2n}{m^3} \cdot 3m^2 =$
- 4) $\frac{3a}{8bx^2} \cdot 5bx =$

11-361869

$$\begin{array}{ll}
 3) \frac{8}{27} \cdot 18 = & 9) \frac{5m}{14n} \cdot 21n = \\
 4) 3 \frac{3}{4} \cdot 12 = & 10) \frac{a+2b}{9x} \cdot 6x = \\
 5) 8 \frac{2}{7} \cdot 21 = & 11) \frac{x+y}{x-y} \cdot (x^2 - y^2) = \\
 6) 2 \frac{4}{25} \cdot 15 = & 12) \frac{mx^2 - nx^3}{4ax + 4bx} \cdot (a+b)^2 =
 \end{array}$$

II. գեղբ.—Ամբողջը բազմապատկել կոտորակի վրա:

$$\text{Տեսանք, վոր } \frac{5}{6} \cdot 4 = \frac{5 \cdot 4^2}{6 \cdot 3} = \frac{10}{3} = 3 \frac{1}{3}$$

Յեթե $\frac{5}{6}$ և 4 բազմապատկիչներն տեղերը փոխենք, արտաքրյալը չպիտի փոխվի. ճիշտ այնպես, ինչպես վոր $3 \cdot 4 = 4 \cdot 3 = 12$: Ուստի ամբողջը կոտորակի վրա բազմապատկելիս ել նույն գործողութիւնը պիտի կատարել, ինչ գործողութիւն վոր կատարում ենք կոտորակն ամբողջի վրա բազմապատկելիս: Այսպէս.

$$5 \cdot 4 \frac{7}{10} = 5 \cdot \frac{47}{10} = \frac{5 \cdot 47}{10^2} = \frac{47}{2} = 23 \frac{1}{2}$$

$$ab^2 \cdot \frac{3c}{4a^2b^2} = \frac{ab^2 \cdot 3c}{4a^2b^2} = \frac{3c}{4a}$$

$$(x-y) \cdot \frac{2}{3x-3y} = \frac{(x-y)2}{3(x-y)} = \frac{2}{3}$$

Լուծել հետևյալ օրինակները.

$$\begin{array}{ll}
 1) 6 \cdot \frac{1}{5} = & 6) (m+2n) \cdot \frac{p}{ab} = \\
 2) 4 \cdot \frac{3}{11} = & 7) 6x \cdot \frac{a+zb}{9x^2} = \\
 3) 66 \cdot \frac{3}{22} = & 8) (a+1) \cdot \frac{1}{a+1} = \\
 4) 2 \cdot 3 \frac{2}{3} = & 9) (m+n) \cdot \frac{m-n}{m+n} = \\
 5) 13 \cdot 1 \frac{6}{65} = & 10) (a-b) \cdot \frac{a+b}{ax-bx} =
 \end{array}$$

Ինչպես տեսնում եք $6 \cdot \frac{2}{3} = \frac{6^2 \cdot 2}{3 \cdot 1} = 4$ այսինքն ամբողջը կոտորակի վրա բազմապատկելիս ամբողջը բաժանում ենք կոտորակի հայտարարի վրա և բազմապատկում ենք համարիչով ինչպես վոր 6 ամբողջը բաժանեցինք 3 ի վրա, կամ 3 մաս արինք, ապա բազմապատկեցինք 2 ով, այսինքն՝ վերցրինք 2 մասը: Ուրեմն տված թիվը կոտորակով բազմապատկել՝ նշանակում է գրանել այդ թիվի տվյալ կոտորակային մասը. կամ տված թիվը կոտորակային մասը գտնելու համար պետք է այդ թիվը բազմապատկել տված կոտորակով. որինակ՝ 6-ի $\frac{2}{3}$ մասը գտնելու համար պետք է 6-ը բազմապատկել $\frac{2}{3}$ -ով, վորը կլինի

$$6 \cdot \frac{2}{3} = \frac{6^2 \cdot 2}{3 \cdot 1} = 4$$

$$\text{Գտնել 1) } 60 \text{ ի } \frac{5}{12} \text{ մասը:}$$

$$2) 75 \text{ ի } \frac{9}{25} \text{ մասը:}$$

$$3) 138 \text{ ի } \frac{5}{23} \text{ մասը:}$$

$$4) 350 \text{ ի } \frac{9}{70} \text{ մասը:}$$

$$5) 3 \frac{3}{5} \text{ ի } \frac{7}{12} \text{ մասը:}$$

$$6) 5 \frac{4}{7} \text{ ի } \frac{7}{13} \text{ մասը:}$$

III. գեղբ.—Կոտորակը բազմապատկել կոտորակի վրա:

$$\frac{2}{3} \cdot \frac{3}{4} = \frac{2^1 \cdot 3^1}{3 \cdot 4} = \frac{1}{2}, \text{ վորովհետև } \frac{2}{3} \text{ ը բազմապատկել } \frac{3}{4} \text{ ով.}$$

նշանակում է գտնել $\frac{2}{3}$ -ի $\frac{3}{4}$ մասը, իսկ սա նշանակում է $\frac{2}{3}$ -ը 4-ի վրա բաժանել, կամ 4 անգամ փոքրացնել (հայտարարը բազմապատկել 4-ով) և վերցնել 3 մասը, այսինքն՝ համարիչը մեծացնել 3 անգամ:

Չեղկերպի կոտորակը կոտորակի վրա բազմապատկելու կանոնը և գրի առնել տեսրերում:

$$\text{Նմանապես } 3 \frac{1}{4} \cdot 4 \frac{5}{7} = \frac{13}{4} \cdot \frac{33}{7} = \frac{13 \cdot 33}{4 \cdot 7} = \frac{429}{28} = 15 \frac{9}{28}$$

$$\frac{a^2 - b^2}{9x^2} \cdot \frac{6x}{a+b} = \frac{(a^2 - b^2) \cdot 6x}{9x^2(a+b)} = \frac{(a+b)(a-b)6x}{9x^2(a+b)} = \frac{2(a-b)}{3x}$$

Կատարեցե՛ք հետևյալ վարժությունները.

- | | |
|--|--|
| 1) $\frac{7}{8} \cdot \frac{4}{5} =$ | 7) $\frac{3a}{5b} \cdot \frac{10b}{21a} =$ |
| 2) $\frac{11}{12} \cdot \frac{15}{22} =$ | 8) $\frac{7a^2}{12} \cdot \frac{9}{5ab} =$ |
| 3) $\frac{5}{6} \cdot \frac{12}{25} =$ | 9) $\frac{2}{x} \cdot \frac{a+b}{3} =$ |
| 4) $2\frac{5}{8} \cdot 2\frac{6}{7} =$ | 10) $\frac{27ab}{5x+5y} \cdot \frac{10}{9b} =$ |
| 5) $12\frac{3}{5} \cdot 2\frac{8}{21} =$ | 11) $\frac{m+n}{3q} \cdot \frac{2p^2}{m^2-n^2} =$ |
| 6) $8\frac{4}{9} \cdot 1\frac{13}{38} =$ | 12) $\frac{x^2+2xy+y^2}{2z} \cdot \frac{9}{x+y} =$ |

Կատարեցե՛ք զումարման, հանման և բազմապատկման հետևյալ գործողությունները:

- 1) $(5 - 1\frac{1}{2} + 1\frac{1}{4} - \frac{1}{8}) \cdot (3 + 1\frac{1}{2} - \frac{3}{4} - 1\frac{3}{4}) =$
 . . . I III II
 պատ. = $9\frac{1}{4}$
- 2) $(5\frac{3}{5} + 4\frac{1}{4} + \frac{3}{4} \cdot 8) \cdot (\frac{1}{2} \cdot 2 + 2 \cdot \frac{2}{3} + 4\frac{3}{4}) =$
 IV VII
 պատ. = 60
- 3) $[4\frac{1}{5} \cdot 2\frac{6}{7} - (9\frac{5}{6} - 1\frac{3}{4})] \cdot 1\frac{1}{47} =$
 պատ. = 4
- 4) $\{[(\frac{3}{4} + \frac{5}{6}) \cdot 2 + (\frac{5}{6} - \frac{3}{4})] \cdot 1\frac{5}{7} - \frac{6}{7}\} \cdot 6\frac{4}{11} =$
 պատ. = 30

Այս որինակները լուծելիս՝ նախ պիտի կատարենք ներքին փակագծերի միջև գործողութիւններն, ապա արտաքին փակագծերի գործողութիւնները: Ներքին փակագիծ ե (\quad) . նրա-

նից հետո արտաքինը $[\quad]$ ե, ապա $\{\quad\}$, Սրանցից ա-

ռաջինը կոչվում ե փոքր փակագիծ, յերկրորդը քառակուսի կամ միջակ փակագիծ, իսկ յերրորդը՝ մեծ փակագիծ: Փակագծի միջև գործողութիւնները կատարելիս՝ նախ պիտի կատարեք բազմապատկման և բաժանման գործողութիւնները, ապա զումարման և հանման գործողութիւնները: Որինակ՝ II որինակում առաջին փոքր փակագիծը բացելիս՝ գործողութիւնները կատարում ենք հետևյալ կարգով:

- | | |
|--|--|
| 1) $5\frac{3}{5} = \frac{5^1 \cdot 3}{5_1} = 3$ | 2) $4 \cdot \frac{1}{4} = \frac{4^1 \cdot 1}{4_1} = 1$ |
| 3) $\frac{3}{4} \cdot 8 = \frac{3 \cdot 8^2}{4_1} = 6$ | 4) $3 + 1 + 6 = 10$ |

Նույն կարգով ել կկատարեք այլ որինակի մյուս փակագծի գործողութիւնները և ապա յերկու փակագծերի գործողութիւններից ստացված թվերը կբազմապատկեք: Մյուս որինակներում ել գործողութիւնները կկատարեք նույն որենքով, ինչպես վոր նշանակված ե որինակի մեջ:

Հասարակ կոտրակների բաժանումը.

I գեղե. $\frac{5}{6} : 15 = \frac{5^1}{6 \cdot 15_3} = \frac{1}{18}$

$$\frac{5}{6} : 15 = \frac{5^1}{6 \cdot 15_3} = \frac{1}{18}$$

Ի՞նչու համար կոտորակն ամբողջի վրա բաժանելիս՝ հայտարարն ենք բազմապատկում ամբողջով: Ձևակերպեցե՛ք այս կանոնը ե զբի առեք ձեր տետրերում:

Նմանապէս $3\frac{3}{5} : 9 = \frac{18}{5} : 9 = \frac{18^2}{5 \cdot 9_1} = \frac{2}{5}$

Կատարեցե՛ք հետևյալ վարժութիւնները:

- | | |
|---------------------------|--------------------------|
| 1) $\frac{3}{8} : 6 =$ | 4) $6\frac{5}{7} : 4 =$ |
| 2) $\frac{9}{11} : 6 =$ | 5) $12\frac{4}{9} : 8 =$ |
| 3) $\frac{20}{21} : 25 =$ | 4) $\frac{3}{8} : 14 =$ |

$$7) \frac{3x}{2} : y =$$

$$8) \frac{2a}{b} : 2 =$$

$$9) \frac{15a^2}{16b} : 10a =$$

$$10) \frac{x^2}{a-b} : 2x =$$

$$11) \frac{3a+3b}{2} : (a+b) =$$

$$12) \frac{m^2-n^2}{x} : (m+n) =$$

$$13) \frac{a^2+10a+25}{5b} : (a+b) =$$

II. գեղգ.—Ամբողջը բաժանել կոտորակի վրա:

$$4 : \frac{2}{3} = \frac{4 \cdot 3}{2} = 6;$$

Ինչպես տեսնում եք, ամբողջը կոտորակի վրա բաժանելիս՝ ամբողջն արտազրուում ենք նույնաթյամբ, իսկ կոտորակը չրջում և բազմապատկում ենք նրանով:

$$\text{Նմանապես } 25 : 2 \frac{1}{2} = 25 : \frac{5}{2} = \frac{25 \cdot 2}{5} = 10$$

$$32m : \frac{48m^2}{7n} = \frac{32m \cdot 7n}{48m^2} = \frac{14n}{3m}$$

$$(a+b)^2 : \frac{a+b}{m^2n} = \frac{(a+b)^2 \cdot m^2n}{a+b} = (a+b) m^2n$$

Կատարեցեք հետևյալ վարժութիւնները.

$$1) 6 : \frac{8}{15} =$$

$$7) 6a : \frac{4a}{5b} =$$

$$2) 8 : \frac{12}{35} =$$

$$8) 15a^3b : \frac{25ab^2}{4} =$$

$$3) 24 : \frac{18}{25} =$$

$$9) (a+b) : \frac{a+b}{a-b} =$$

$$4) 32 : 6 \frac{2}{5} =$$

$$10) (x-3) : \frac{x^2-9}{3z} =$$

$$5) 60 : 3 \frac{9}{11} =$$

$$11) (3x^2-3y^2) : \frac{x+y}{2} =$$

$$6) 64 : 6 \frac{6}{7} =$$

$$12) (a+u) : \frac{a^2+8a+16}{6b} =$$

III. գեղգ.—Կոտորակը բաժանել կոտորակի վրա:

$$\frac{2}{3} : \frac{5}{6} = \frac{2 \cdot 6}{3 \cdot 5} = \frac{4}{5}$$

Ինչպես տեսնում եք, այս դեպքում առաջին կոտորակին արտազրուում ենք նույնաթյամբ, իսկ յերկրորդ կոտորակը չրջում

և բազմապատկում ենք նրանով, վորովհետև նախ յենթադրում ենք, վոր $\frac{2}{3}$ -ը բաժանված է վոչ թե $\frac{5}{6}$ -ի վրա, այլ ուղղակի 5-ի վրա. այսպիսով մտքներին մեջ կոտորակի հայտարարը չրջում ենք կամ 6 անգամ փոքրացնում ենք, վորով կոտորակը 6 անգամ մեծանում է, և մենք բաժանում ենք $\frac{2}{3}$ -ը 6 անգամ ա-

վելի մեծ թվի վրա: Բայց $\frac{2}{3}$ -ը 6 անգամ ավելի մեծ թվի վրա բաժանելով, 6 անգամ էլ փոքր քանորդ ենք ստանում՝ համեմատած այն քանորդի հետ, վորը կատանայինք, յեթե $\frac{2}{3}$ -ը բաժա-

նելինք վոչ թե 5-ի վրա, այլ $\frac{5}{6}$ -ի վրա. ուստի այդ բաժանումը կատարելուց հետո $\frac{2}{3 \cdot 5}$ քանորդը 6 անգամ բազմապատկում ենք, վորպեսզի ցանկացած քանորդն ստանանք. դրա համար էլ գրում ենք

$$\frac{2 \cdot 6^2}{3 \cdot 5} = \frac{4}{5}$$

Նույն ձևով ենք կատարում $9 \frac{1}{3} : 2 \frac{1}{3} = \frac{28}{3} : \frac{7}{3} = \frac{28 \cdot 3}{3 \cdot 7} = 4$

$$\frac{15ax}{16by} : \frac{5x}{8y} = \frac{15^2 ax \cdot 8^2 y^2}{16^2 by \cdot 5x} = \frac{3a}{2b}$$

Կատարել հետևյալ վարժութիւնները

$$1) \frac{1}{2} : \frac{3}{4} =$$

$$7) \frac{10a^2}{3z} : \frac{5a}{9z^2} =$$

$$2) \frac{3}{5} : \frac{9}{20} =$$

$$8) \frac{8a^3}{9b^3} : \frac{4a}{3b} =$$

$$3) \frac{5}{8} : \frac{15}{16} =$$

$$9) \frac{a^2}{x^2+y^2} : \frac{a}{3c} =$$

$$4) 12 \frac{1}{2} : 2 \frac{1}{2} =$$

$$10) \frac{a^2b}{x^2+y^2} : \frac{ab}{a^2-b^2} =$$

$$5) 4 \frac{3}{8} : 2 \frac{3}{16} =$$

$$11) \frac{8}{a+b} : \frac{2x}{a^2+2ab+b^2} =$$

$$6) 14 \frac{7}{12} : 18 \frac{3}{4} =$$

$$12) \frac{a+b}{a-b} : \frac{a-b}{a+b} =$$

Կատարեցեք հետևյալ փակագծերով գործողութիւնները:

$$1) \left(2 \frac{1}{2} : 5 + 3 \frac{1}{2} \cdot 2 \right) \cdot \left(\frac{3}{4} \cdot 8 - \frac{2}{5} \cdot 5 \right) =$$

$$\text{Պատ.} = 30$$

$$2) \left[1 - \left(3 - 1 \frac{3}{4} \right) : \left(2 \frac{3}{8} - 1 \frac{1}{8} + 1 \frac{3}{4} \right) \right] \cdot 6 =$$

$$\text{Պատ.} = 3 \frac{1}{2}$$

$$3) \frac{\left(5 \cdot \frac{3}{5} + 4 \cdot \frac{1}{4} + \frac{3}{4} \cdot 8 \right) \cdot \frac{1}{5}}{\left(\frac{1}{2} \cdot 2 + \frac{2}{3} \cdot 3 + 4 \cdot \frac{3}{4} \right) \cdot \frac{1}{3}} =$$

$$\text{Պատ.} = 1$$

Կատարեցեք նաև հետևյալ հանրահաշվական կոտորակային որինակները:

$$1) \left(\frac{3}{a^2} - \frac{2}{a^2} + \frac{1}{a} \right) \cdot 6a^2 =$$

$$5) \left(\frac{1}{x} + \frac{1}{y} \right) : \left(\frac{1}{y^2} - \frac{1}{x^2} \right) =$$

$$2) \left(1 - \frac{a-b}{a+b} \right) \cdot (a+b) =$$

$$6) \left(\frac{1}{x^2} + \frac{2}{xy} + \frac{1}{y^2} \right) : \left(\frac{1}{x} + \frac{1}{y} \right) =$$

$$3) \frac{\frac{x}{y} + 3}{\frac{x}{y} - 2} =$$

$$7) \left(\frac{1}{ab} + \frac{1}{bc} - \frac{1}{ac} \right) : \frac{a+b+c}{abc} =$$

$$4) \frac{\frac{a-b}{b} - \frac{a}{a}}{\frac{1}{a} + \frac{1}{b}} =$$

$$8) \frac{m + \frac{mn}{m-n}}{m - \frac{mn}{m+n}} =$$

Այս որինակներն ել կատարում եք այսպես.

Որինակ՝ 1) $x \cdot \left(1 + \frac{1}{x} \right) = x \cdot \frac{x+1}{x} = \frac{x(x+1)}{x} = x+1$


$$2) \frac{1 + \frac{1}{a-1}}{1 - \frac{1}{a+1}} = \frac{\frac{a-1+1}{a-1}}{\frac{a+1-1}{a+1}} = \frac{a}{a} = \frac{a \cdot (a+1)}{(a-1) \cdot a} = \frac{a+1}{a-1}$$

$$3) \left(\frac{1}{x} + \frac{1}{y} \right) : \left(\frac{1}{y^2} - \frac{1}{x^2} \right) = \frac{y+x}{xy} : \frac{x^2-y^2}{x^2y^2} = \frac{(y+x)x^2y^2}{xy(x^2-y^2)} = \frac{xy}{x-y}$$

Հարաբերություններ յեկ համեմատություններ: Ուղիղ յեկ հարաբերա համեմատական մեծություններ:

1. Հարաբերություն.

1. Խնդիր.— Տրված են a և b ուղիղ գծի հատվածները:



Իմանալ a հատվածը քանի անգամ մեծ է b հատվածից, այսինքն՝ գտնել a և b գծերի հարաբերությունը: Գտնել նաև b և a գծերի հարաբերությունը:

ԾԱՆՈԹ.— Չափում եք a և b հատվածները կարկինով կամ սանիմաքերով:

2. Խնդիր.— Գտնել հետևյալ հարաբերությունները:

ա) Մետրի հարաբերությունը դեցիմետրին:

բ) Դեցիմետրի » մետրին:

գ) Մետրի » սանտիմետրին:

դ) Սանտիմետրի » մետրին:

ե) Կիլոգրամի » գրամին:

զ) Գրամի » կիլոգրամին:

Ձեռկերպիկ և գրել սեփարելում, թե ի՞նչ է հարաբերությունը:

Ցուցմունք 1. a և b թվերը, վորոնք կազմում են $\frac{a}{b}$ հարաբերությունը, կոչվում են հարաբերության անդամներ, ըստ վորում a-ն կոչվում է նախորդ անդամ, b-ն՝ հետնորդ անդամ:

Ցուցմունք 2. $\frac{a}{b}$ և $\frac{b}{a}$ լերկու հարաբերությունները կոչվում են միմյանց հակադարձ հարաբերություններ:

Ձրինակներ.— Գտնել հետևյալ թվագույգերի հարաբերությունները:

1) 5 և 10, 2) 20 և 40, 3) 15 և 10, 4) 30 և 20, 5) $3 \frac{1}{2}$ և

$2 \frac{1}{4}$, 6) $1 \frac{2}{3}$ և $2 \frac{1}{8}$:

Ցույց տալ թե այդ հարաբերություններից վորոնք են հավասար:

2. Համեմատություններ:

Յուզմունք.—Յերկու հարաբերությունների հավասարությունը կոչվում է համեմատություն:

Որինակ՝ $2:4=5:10$ կամ $\frac{2}{4}=\frac{5}{10}$... (1)

Հարցեր.—ա) Քանի թիվ (անդամ) կա այդ համեմատության մեջ:

բ) Ըստ անդամների դասավորության կարգի, վեր անդամները կրկնեն արտաքին և վերինք ներքին:

գ) Ի՞նչ վրա բազմապատկելով գտնել արտաքին անդամների արտադրյալը և հետո գտնել ներքին անդամների արտադրյալն, ու համեմատել այդ արտադրյալները միմյանց հետ:

դ) Ի՞նչ ներքև կազմեցե՞ք ևս 3 հատ համեմատություններ և նրանց արտաքին անդամների արտադրյալը համեմատելով ներքին անդամների արտադրյալի հետ՝ իմացե՞ք:

ե) Ի՞նչ կառված կա համեմատության արտաքին անդամների և ներքին անդամների արտադրյալների միջև: Ձևակերպեցե՞ք այդ կանոնը և գրի առե՞ք ձեր տեսերևույթը:

զ) a, b, c և d թվերից կազմել համեմատություն:

է) Կազմել այդ համեմատության արտաքին և ներքին անդամների արտադրյալների հավասարությունը: Արտահայտել արտաքին անդամներից վորևե մեկը ներքին անդամների և մյուս արտաքին անդամի միջոցով, արտահայտել վորևե ներքին անդամներից մեկն արտաքին անդամների և մյուս ներքին անդամի միջոցով: Նույնն արտահայտել ըստևով ու գրել տեսերևույթ:

ը) $x:8=6:12$; գտնել x-ը:

Ինչու համար $x = \frac{8^2 \cdot 6^2}{12^2} = 4$

թ) Գտնել $40:x=20:5$ համեմատության ներքին անդամը:

Կատարել հետևյալ վարժությունները:

1) $x:8=5:6$

5) $a:x=b:c$

2) $4:x=2,5:3\frac{1}{3}$

6) $(a+b)^2 a = (a^2 - b^2) : x$

3) $6,5:1,3=x:2\frac{1}{2}$

7) $(a-b)^2 : x = (ab^2 - b^3) : c$

4) $3\frac{1}{4}:3,9=11:x$

8) $x:(a-b)=(c-d):(3a^2-3ab)$

Կազմել համեմատություններ հետևյալ հավասարություններից:

1) $2 \cdot 16 = 4 \cdot 8$

3) $a \cdot b = c \cdot d$

2) $12 \cdot 9 = 4 \cdot 27$

4) $(a+b) \cdot c = (a-b) \cdot d$

Յուզմունք.—Պետք է յուրաքանչյուր մասից վերցնել մի արտադրիչ և հավասարության յերկու մասերն էլ բաժանել նրանց արտադրյալի վրա:

3. Աղիդ համեմատական մեծություններ:

Հարցեր.—ա) Բանվորը 3 օրում ստանում է 9 ուլբի. 6 օրում նա վճրքան կստանա:

բ) Քանի տնդամ կմեծանա բանվորի աշխատավարձը, լեթե աշխատելու ժամանակը մեծանա յերկու, յերեք, չորս անգամ:

գ) Վորքան անգամ պիտի փոքրացնել աշխատանքի ժամանակը, վորպեսզի աշխատավարձը փոքրանա յերկու, յերեք, չորս անգամ:

դ) Ի՞նչ պիտի կախման մեջ է բանվորի աշխատավարձը նրա աշխատանքի ժամանակի հետ (այսինքն՝ ինչպես է մեծանում կամ փոքրանում ժամանակը 2, 3, 4, 5 անգամ մեծացնելիս և փոքրացնելիս):

Յուզմունք.—Աշխատավարձը կոչվում է Ֆունկցիա, իսկ աշխատանքի ժամանակը՝ արդումենտ:

ե) Ե հարցը լուծել համեմատության միջոցով այսպես.

աշխատանքի ժամանակը	աշխատավարձը
3 օրում	9 ուլբի
6 օրում	x »

$x:9=6:3 \quad | \quad x = \frac{9^2 \cdot 6}{3^2} = 18$

Պատասխանը 18 ուլբի:

զ) Համեմատությունն ստուգել տեղադրելով x-ի արժեքը: $18:9=6:3$:

Յեզակացություն.—Յերկու մեծություններ կոչվում են ուղիղ համեմատական, լեթե նրանցից մեկը վորոշ հարաբերությամբ մեծացնելիս կամ փոքրացնելիս՝ մյուս մեծությունը նույնպես հարաբերությամբ մեծանում կամ փոքրանում է:

Խնդիրներ.—1) 13 մետր սատինն արժ է 7 ու. 80 կ.: Քնի մետր սատին կարելի լե գնել 6 ու. 30 կողեկով:

2) Միատեսակ հիւշքեր ունեցող չերկու գլաններից առաջինի ծավալը հավասար է 23,5 dcm³ է, բարձրությունը՝ 6 dcm. - Ի՞նչ վերջին է յերկրորդ գլանի բարձրությունը, յեթե նրա ծավալը հավասար է 4,7 dcm³. - Ի՞նչ:

3) 6 dcm³ ծավալ ունեցող պղնձե գունդը կշռում է 59 կգ. վերջին կշիռի $4\frac{1}{2}$ dcm³ ծավալ ունեցող պղնձե գունդը:

4) 28 բանվոր միասին կատարեցին 60 կիլոգրամում հարաշարժանք: Գննի կիլոգրամում հարաշարժանք կկատարեն 42 բանվորը:

4. Հակադարձ համեմատական մեծություններ.

Հարցեր.— ա) 12 բանվոր մի աշխատանք կատարեցին 6 օրում: Գննի որում կկատարեն այդ նույն աշխատանքը 4 բանվորը:

բ) Գննի անգամ կփոքրանա աշխատանքի ժամանակը, յեթե բանվորների թիվը մեծանա 2, 3, 4, անգամ:

գ) Գննի անգամ կմեծանա աշխատանքի ժամանակը, յեթե բանվորների թիվը փոքրանա 2, 3, 4 անգամ:

դ) Ինչպե՞ս համար կարելի չե՞սուսել, վոր աշխատանքի ժամանակը ֆունկցիա չե, իսկ բանվորների թիվը՝ արգումենտ:

ե) Ինչպիսի՞ կախման մեջ է աշխատանքի ժամանակը բանվորների թվի հետ:

զ) Ինչպե՞ս այդպիսի կապակցությունը կոչվում է հակադարձ համեմատական կապակցություն:

է) ա). հարցը լուծել համեմատության միջոցով:

Բանվ. թիվը	աշխատանքի ժամանակը
12 բանվորը	6 օրում
4 »	x »

$$x : 6 = 12 : 4 \quad \left| \quad x = \frac{6 \cdot 12^3}{4_1} = 18$$

Պատասխանը 18 օր:

Յեզակացություն.— Յերկու մեծություններ կոչվում են հակադարձ համեմատական, յեթե նրանցից մեկը վորևե հարաբերության մեծացնելիս, մյուսը նույն հարաբերությանը ինքահետևում է, կամ մեկը վորևե հարաբերությանը փոքրացնելիս՝ մյուսը նույն հարաբերությանը մեծանում է:

Ենթադրե՛ք.— 1) Յեթե լամպն որական 3 ժամ վառվի, նավթը կբավականացնի 30 օր: Գննի որ կբավականացնի նույն նավթը, յեթե լամպն որական վառվի 2 ժամ:

2) Բակը սալահատակելու համար հարկավոր են 500 սալեր $0,3 \times 0,4$ քառ. մետր չափերով: Գննի սալ է հարկավոր այդ նույն բակը սալահատակելու համար, յեթե այդ սալերն ունենան $0,5 \times 0,5$ չափ. պատ = 240:

3) Նույն ծանրություն ունեցող չերկու մարմիններից մեկի ծավալը 16 խոր. դեցիմետր է, իսկ տեսակարար կշիռը 1,2 է: Գտնել չերկրորդ մարմնի տեսակարար կշիռը, յեթե նրա ծավալը 24 խոր. դեցիմետր է:

Պատ. = 0,8

5. Համեմատության ածրամների սեղափոխությունը
Տրված են միևնույն անդամներից կազմված հետևյալ համեմատությունները.

- 1) 2 : 6 = 3 : 9
- 2) 9 : 6 = 3 : 2
- 3) 2 : 3 = 6 : 9
- 4) 6 : 2 = 9 : 3

Հարցեր.— 1) Ստուգել այդ համեմատությունները:

2) Ել ինչպիսի տեղափոխություններ կարելի է կատարել այդ նույն անդամներից:

3) Յուրաքանչյուր թե 1-ին համեմատության անդամների ինչպիսի տեղափոխությունից ստացվեցին 2), 3) և 4) համեմատությունները:

4) Այս վերջին հարցը ձևակերպել և գրի առնել տեսքերի մեջ: Վերջին յեզակացությունը ստուգել միջանի այլ որոշակները վորա հետ:

Ինչպե՞րդ կազմեցե՛ք 3 համեմատություն և կատարեցե՛ք բոլոր հնարավոր տեղափոխությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ I ՅԵՎ II ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

